

յուրկումն ցուցաբերել յոթնամյա պլանի կոնսոլիդացիոն թվերի ներկայումս ծավալված քննարկմանը:

Կոնֆերանսի մասնակիցները ցանկութուն հայտնեցին ձեռնարկութուններում համապատասխան աշխատանք ծավալել այս թերթը լայնորեն տարածելու համար և խնդրել թերթի խմբագրութիւնը հաշվի առնել կոնֆերանսում արված դիտողութուններն ու առաջարկութունները:



1958 թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ խորհրդակցութիւն, նվիրված ԳՏԻՀ-ի ՊԳՏԿ-ի և ԳԱ Գիտական և տեխնիկական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտի, գիտական և տեխնիկական ինֆորմացիայի վիճակի հարցին:

Խորհրդակցութիւնը ներկա էին Ժողտնտխորհի, մինիստրութիւնների, գերատեսչութիւնների, գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատութիւնների, նախագծային ու կոնստրուկտորական կազմակերպութիւնների, արդյունաբերական ձեռնարկութիւնների և այլ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

ԳՏԻՀ-ի ՊԳՏԿ և ԳԱ Գիտական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտի կողմից գիտական և տեխնիկական ինֆորմացիայի գծով կատարված աշխատանքի մասին ղեկուցեց ինստիտուտի ավագ գիտական աշխատող, տեխն. դիտ. թեկնածու Ն. Զելիկովը:

Ինստիտուտի հիմնական խնդիրն է գիտութիւն և տեխնիկայի կարևորագույն բնագավառներն ապահովել գիտական, տեխնիկական և տնտեսական ինֆորմացիայով, ինչպես և առաջավոր գիտատեխնիկական ու արտադրական փորձի փոխանակութիւն գծով ինֆորմացիոն նյութերով: Գիտական և տեխնիկական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտում վերամշակվում են ավելի քան 15 հազար հայրենական

և արխարհի 88 երկրներից 50 լեզուներով ստացվող արտասահմանյան գիտական ու տեխնիկական ժուռնալներ:

1959 թ. ինստիտուտը հրատարակելու է ռեֆերատային ժուռնալների 13 սերիա և տեխնիկայի ու գիտութիւն տարբեր բնագավառների գծով Վէբսպրես ինֆորմացիաների 48 սերիաներ:

Այնուհետև ընկ. Զելիկովը մանրամասն կանգ առավ ինստիտուտի թողարկած ինֆորմացիոն գրականութիւն թեմատիկայի վրա:

Մտքերի փոխանակութիւն ժամանակ հանդես եկավ Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (ՄՄԳՀ-ի) ներկայացուցիչ Լ. Թովմասյանը, որը նշեց, որ ԳՏԻՀ-ի կողմից վերարտադրվող արտասահմանյան ժուռնալների թողարկումը ուղանում է 6—8 ամսով և նրանք կորցնում են իրենց արժեքը: Ընկ. Մաթևոսյանը (Նրևանի Բժշկական ինստիտուտ) ցանկութուն հայտնեց, որ արագացվի բիոլոգիայի ռեֆերատային ժուռնալի հեղինակային ու առարկայական ցանկերի հրատարակումը, ինչպես նաև ռեֆերատային ժուռնալներում զետեղվեն ամփոփված տեսութիւն հոգովածներ:

Մյուս ելույթներում խոսվեց ռեֆերատով ժուռնալների և «Վէբսպրես ինֆորմացիաների» բարձր արժեքի, դրանց հրատարակման ժամկետների ձգձգման, ԳՏԻՀ-ի հրատարակութիւնների թեմատիկայի ընդլայնման և ինստիտուտի հրատարակութիւնների մասին ստվող ինֆորմացիաների բարելավման առթիւ:

Ամփոփելով խորհրդակցութիւն արդյունքները, ՊԳՏԿ-ի նախագահի տեղակալ ընկ. Մկրտումյանն ընդգծեց գիտատեխնիկական ինֆորմացիայի կարևորութիւնը Հայկ. ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսութիւն տեխնիկական պրոգրեսն ապահովելու համար: Առաջարկվեց ԳՏԻՀ-ի կողմից հրատարակվող ինֆորմացիոն գրականութիւն նյութերի շուրջը կազմակերպել ընթերցողների կոնֆերանս:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱՆՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվներով նախատեսվում էր Ադրբեջանական, Հայկական և Վրացական ՍՍՌ էներգետիկ սխեմաների միավորումը նրանց արտադրողական ուժերի էլ ավելի արագ զարգացման հնարավորութիւնն ապահովելու համար: Հետագայում Անդրկովկասյան միավորված էներգետիստեմը պետք է կապվի Հյուսիսային Կովկասի հետ և նրա միջոցով՝ ՍՍՌՄ Եվրոպական մասի միասնական էներգետիստեմի հետ:

Անդրկովկասի էներգետիկ սխեմաների միավորումը շատ կարևոր դեր է խաղում երեք ռեսպուբլիկաների էներգետիկ բազայի զարգացման գործում: Նա հնարավորութիւն կտա խիստ բարձրացնել ժողովրդական տնտեսութիւն էլեկտրամատակարարման հուսալիութիւնը, ավելի ռացիոնալ կերպով օգտագործել վառելանյութային և հիդրավլիկական ռեսուրսները:

Չնայած նրան, որ Անդրկովկասյան էներգետիստեմների միավորումը գտնվում է կոնկրետ իրականացման փուլում և

մտալեզ մեկուկես տարում պետք է ավարտվի, դեռ վերջնական լուծում չեն ստացել մի շարք կարևոր գիտական և տեխնիկական հարցեր, որոնցից կախված է ողջ միավորման աշխատանքի էֆեկտիվութիւնն ու հուսալիութիւնը: Պետք է նշել, որ շատ հարցեր դեռ պատշաճ կերպով չեն լուծվել նաև մյուս էներգետիկ միավորումների աշխատանքի պրակտիկայում: Դրանց ավելանում են նաև Անդրկովկասի համար լուրահատուկ հարցերը՝ բարձր ճնշումային հիդրոէլեկտրակայանների կասկածների աշխատանքը, խիստ պսակ առաջացնող բարձր լուծանային էլեկտրահաղորդման գծերի առկայութիւնը, աշխատանքի ռեժիմով և բնույթով խիստ բազմազան էլեկտրակայանների միավորումը և այլն:

Անդրկովկասի էներգետիստեմների միավորման հետ կապված հանգուցային հարցերը քննելու համար 1958 թ. նոյեմբերի 12—14-ը Նրևանում կայացավ Անդրկովկասի էներգետիկ սխեմաների հարցերին նվիրված գիտատեխնիկական խորհրդակցութիւն: Խորհրդակցութիւնը կազմակերպել էր էներ-

գետիկ արդյունաբերության գիտա-տեխնիկական ընկերության
Հայկական վարչությունը Հայկ. ՍՍՌ Ժողտնտխորհի էներգե-
տիկ վարչության հետ միասին:

Խորհրդակցությանը մասնակցեցին 180 դեկտառ 49 կազ-
մակերպություններից: Նրանց թվումն էին՝ Բարձր կազմակեր-
պությունների 19 ներկայացուցիչ, Թբիլիսիի 17 ներկայա-
ցուցիչ, Մոսկվայի 9 և «Ջերմէլէկտրաէնէրգիա» ինստիտու-
տի Ռոստովի բաժանմունքի 1 ներկայացուցիչ:

Խորհրդակցությունում լավեցին 18 զեկուցում:

Ադրբեջանական ՍՍՌ Ժողտնտխորհի էներգովարչության
պետ Ա. Բ. Բայրամ-Ջադեն բնութագրեց ռեսպուբլիկայի
էներգաբալանսի փոփոխության և ժողովրդական տնտեսության
մի շարք ճյուղերի զարգացման դինամիկան: Բացի գործող
ջերմային կենտրոնական էլեկտրակայանների (ՏէՑ) և պետա-
կան շրջանային էլեկտրակայանների (ԳՌԷՍ) ընդլայնումից,
Ալի-Բայրամլիում բնական գազային հանքավայրերի բաղադ-
րված կկառուցվի հզոր ԳՌԷՍ: Առաջին ագրեգատի գործարկու-
մը պլանավորվում է 1961 թ.: Այդ էլեկտրակայանն ունի
միջսխտեմային նշանակություն և նախատեսված է Ադրբե-
ջանի, Վրաստանի և Հայաստանի էլեկտրաէներգիայի դեֆի-
ցիտը ծածկելու համար: Զեկուցողը նշեց, որ պետք է արա-
զացնել Ադրբեջանի հիդրոէլեկտրակայանի կառուցման հար-
ցը, քանի որ նա կոմպլեքսային ձևով կապված է ոռոգման
հետ, տեղավորված է Անգրիկովկասի երեք էներգոսխտեմների
կցվանքում և միավորման համար մեծ նշանակություն ունի:

Հայկ. ՍՍՌ Ժողտնտխորհի էներգովարչության պետ Գ. Ա.
Ալեքսանյանը բնութագրեց էներգաբալանսի կառուցվածքը,
Հայաստանի էներգետիկայի առանձնահատկությունները և
Սևանա լճի ջրերի օգտագործումը բարելավելու անհրաժեշտ
միջոցառումները:

Ռեսպուբլիկայում յոթնամյակի ընթացքում կկառուցվեն
զգալի կարողության երկու ջերմային էլեկտրակայան և նրանց
ագրեգատները կգործարկվեն 1962—1964 թթ.: Ղարադաղի
գազի բարձր հատկությունները թույլ կտան նրանից թանկար-
ժեք հումք՝ ացետիլեն ստանալ քիմիական արդյունաբերու-
թյան համար, որից հետո գազը կօգտագործվի իրեն էներգե-
տիկ վառելանյութ:

1965 թ. նախատեսվում է ավարտել Որոտանի կասկադի
Տաթևգէսի շինարարությունը, որը կարևոր դեր է խաղում
սխտեմի կարգավորման գործում, հատկապես հիդրոէլեկ-
տրակայանների Սևան—Հրազդանի կասկադը ոռոգման գրա-
ֆիկի վրա փոխադրելուց հետո:

Վրացական ՍՍՌ Ժողտնտխորհի էներգովարչության գլխա-
վոր ինժեներ Վ. Ն. Մխեիձեն լուսաբանեց ռեսպուբլիկայի
էներգաբալանսի վիճակը: Էլեկտրաէներգիայի աճող պահանջը
ծածկելու համար նախատեսվում է ընդարձակել գոյություն
ունեցող կենտրոնական ջերմային էլեկտրակայանները (ՏէՑ),
ինչպես նաև կառուցել գազով աշխատող նոր հզոր ջերմային
էլեկտրակայան, գործարկելով առաջին ագրեգատը 1961 թ.:

Հիմնավորվեց Ինգուրիի կասկադի առաջին հզոր աստի-
ճանի՝ Ինգուրիգէսի շինարարությունը, որի գործարկման
ժամկետը սահմանված է 1966—1967 թթ.:

Նախագծային կազմակերպություններից լավեցին 5 զե-
կուցում:

Թբիլիզիդէպի գլխավոր էլեկտրիկ Վ. Յա. Բերլինը զեկու-
ցեց Անգրիկովկասի էներգետիկ սխտեմի ստեղծման խնդր-
ները մասին, հիմնվելով ՍՍՌ-Էլեկտրակայանների մինիստ-
րության (ԷԿՄ) հանձնարարությամբ Թբիլիզիդէպի կատա-
րած տեխնիկա-տնտեսական զեկուցման նախագծի վրա, որը
վերաբերում է էներգոսխտեմների միավորմանը:

Անգրիկովկասի միավորված էներգոսխտեմն ունի հետևյալ
առավելությունները:

1. Լիովին կվերացվի կամ զգալիորեն կպակասեցվի էլեկ-
տրաէներգիայի դեֆիցիտը Վրացական և Հայկական ՍՍՌ-ում,
առանց որևէ վնաս հասցնելու Ադրբեջանական ՍՍՌ Ժողովր-
դական տնտեսությանը:

2. Նախագրյալներ կստեղծվեն յուրաքանչյուր ռեսպուբ-
լիկայի բնական հարստությունների և էներգետիկ ռեսուրսների
հետագա էլ ավելի լրիվ օգտագործման համար: Հայկ. ՍՍՌ-ում
հնարավորություն կստեղծվի խիստ կրճատել Սևանա
լճից բաց թողնվող ջրերը:

3. Խիստ կաճի էներգոսխտեմների աշխատանքի հուսա-
լիությունը և տնտեսական շահավետությունը:

4. Կստացվի կարողություն միասնական ռեզերվ, առանձին
էներգոսխտեմների կարողությունների ռեզերվների գումարից
ավելի փոքր և կպակասի էներգոսխտեմի բեռնավորման հա-
մատեղված մաքսիմումը:

Հայգիդէպի գլխավոր էլեկտրիկ Ա. Խ. Սարաջը իր զե-
կուցման մեջ մանրամասն լուսաբանեց Հայաստանի բարձրա-
վելու գծերի նախագծվող զարգացումը և դրա հետ կապված
գիտական ու ինժեներական պրոբլեմները:

«Ջերմէլէկտրաէնէրգիա» ինստիտուտի Ռոստովի բաժան-
մունքի խմբի ղեկավար Լ. Ի. Զուրաբովը լուսաբանեց Անգր-
կովկասի ռեսպուբլիկաներում սպառվող ջերմային բեռնավոր-
ումների և գազի սպառման մակարդակները:

«Հիդրոէներգոնախագիծ» ինստիտուտի նախագծման, ավ-
տոմատիկայի, տեխնիկականի և գործարկման-կարգավոր-
ման աշխատանքների բաժանմունքի (ՕԱՏՆ) գլխավոր ինժե-
ներ Մ. Դ. Կուչկինի զեկուցումը նվիրված էր Անգրիկովկասյան
էներգոսխտեմների միավորման մեջ հաճախականության ու
ակտիվ կարողության ավտոմատիկ կարգավորման հարցին:

Ներկայումս այդ բարդ հարցը լուծվում է Սովետական
Միության մի շարք էներգոսխտեմներում: Կենտրոնի և
Ուրալի միավորված սխտեմներում կատարված փորձարկում-
ների և ուսումնասիրությունների շնորհիվ որոշվել են այն
պայմանները, որոնց պետք է բավարարի կարգավորման նման
սխտեմը:

«Հիդրոէներգոնախագիծ» ՕԱՏՆ-ի խմբի ղեկավար Կ. Բ.
Միրոշնիկովը զեկուցեց միավորված Անգրիկովկասյան էներ-
գոսխտեմի դիսպետչերական կառավարչության կազմակերպ-
ման ու միջոցների մասին:

Միավորված դիսպետչերական ծառայության (ՄԴԾ) հիմ-
նական ֆունկցիաները պետք է կայանան ռեժիմային և պլա-
նային բնույթի հարցերի ղեկավարման մեջ: ՄԴԾ-ի անմիջա-
կան օպերատիվ կառավարման ենթակա են միայն միջոցառ-
մային էլեկտրահաղորդման գծերը, իսկ օպերատիվ տնօրի-
նություն տակ պետք է գտնվեն միավորման հիմնական էլեկ-
տրակայանները և 220 կՎ ցանցը:

ՄԴԾ-ի դիսպետչերական կետը պետք է սարքավորված լինի հեռաչափման և հեռազգնանշման անհրաժեշտ սարքերով: Անդրկովկասի ՄԴԾ-ի դիսպետչերական կետի տեղավորումը Թբիլիսիում տալիս է տնտեսական առավելություններ, իսկ Աղստաֆայում ՄԴԾ տեղավորելու վարկանստ ունի տեխնիկական առավելություններ:

Գիտական կազմակերպությունների կողմից տրվեց 9 զեկուցում:

Վրացական ՍՍՌ ԳԱ էներգետիկայի ինստիտուտի զիրեկտոր Պ. Գ. Շենգելիան իր զեկուցումը նվիրեց Վրացական ՍՍՌ խոշոր հիդրոէներգետիկ շինարարության հարցերին:

Ագրեքանական ԳԱ էներգետիկայի ինստիտուտի զիրեկտորի տեղակալ Բ. Ա. Գյուլամամզովը լուսաբանեց Ագրեքանական ՍՍՌ հիդրոէներգետիկ օգտագործման հեռանկարները:

Հայկ. ՍՍՌ ԳԱ էլեկտրատեխնիկայի լաբորատորիայի զիրեկտոր Գ. Տ. Ադունցը իր զեկուցման մեջ նշեց, որ էներգոսխառմաների միավորումը նախագծելիս անհրաժեշտ ուժիմային հաշվարկները կատարելու համար հարմար է օգտագործել իրենց լաբորատորիայում ստեղծված էլեկտրասխառմի մոդելը, որ ղուպորդված է հասարակ թվական հաշվիչ մեքենայի հետ: Նույն լաբորատորիայի բարձր լաբումների բաժնի ղեկավար Ա. Ս. Թորոսյանը շոշափեց պսակից առաջացող կարողության կորուստների պրոգնոզի մեթոդիկան 110—330 կվ լարումով և հատ-հատ հաղորդալարերով բարձր լիսնային էլեկտրահաղորդման դեմերի համար:

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետի ՊԳՏԿ ծանր արդյունաբերության բաժնի պետ Դ. Բ. Դավթյանը հաղորդեց 300 կվ էլեկտրահաղորդման գծերի հիմքերի և հենարանների կոնստրուկցիաների մասին: Հայկական էներգոսխառման Անդրբլիզկովկասյան էներգոսխառմի հետ կապելու համար:

Զեկուցումների քննարկման շուրջը սկսված վիճաբանություններին մասնակցեցին 32 ղեկավար ֆինարկման ենթակառուցվածքի հիմնականում Անդրկովկասի էներգոսխառմաների իրագործվող միավորման ակտուալ հարցերը: Զեկուցումներում և ելույթներում շոշափված բոլոր էական հարցերի առթիվ խորհրդակցությունը տվեց իր հանձնարարականները, որոնք իրենց արտայայտվում էր տան ընդունված որոշման մեջ:

Խորհրդակցությունը հաստատեց աստղի սխեմայով Անդրկովկասի էներգոսխառմաներն առաջին հերթին միավորելու ճշտությունը, կառուցելով Մինգեշաուրգէս—Աղստաֆա—Թբիլիսի և Աղստաֆա—Աթաբեկյանգէս—Երևան 220 կվ գծերը, որոնք Աղստաֆայում ունենալու են փոխարկիչ կետ և հետագայում փոխադրվելու են 330 կվ: Միաժամանակ նշվել է առանձին էներգոսխառմաների միջև լրացուցիչ կապեր սահմանելու հարցի հետազոտման անհրաժեշտությունը հետագայում:

Անդրկովկասի ստեղծվող միավորված դիսպետչերական կառավարչության (ՄԴԿ) ֆունկցիաները պետք է առավելագույն չափով պարզացվեն: ՄԴԿ պետք է հիմնականում ապահովի էներգոսխառմաների միջև կարողությունների և ռեզերվի տնտեսապես շահավետ բաշխումը, ինչպես նաև միավորված սխառմի աշխատանքի հուսալիության բարձրացումը:

Խորհրդակցությունը տեխնիկական տեսակետից ամենից ավելի նպատակահարմար համարեց հանձնարարել Անդրբլիզ-

կասի ՄԴԿ-ն տեղավորել երեք էներգոսխառմաների միացման կենտրոնում: Աղստաֆայի ենթակայանում:

Անդրկովկասի էներգոսխառմաների միավորման և նրա դիսպետչերական կառավարչության ամենից ավելի ռացիոնալ սխեման ապահովելու համար խորհրդակցությունը հանձնարարեց իրագործելու մի շարք նախագծային և գիտա-հետազոտական աշխատանքներ: Դրանց թվին են պատկանում միջսխառմային կապերի և ցանցերի զարգացման նախագծային աշխատանքները, որոնք վերաբերում են ռեսպուբլիկայի բոլոր շրջանների լայն էլեկտրիֆիկացմանը և միավորման հուսալիության բարձրացմանը:

1959—1965 թթ. ժամանակաշրջանի կոնսուլ թվերի հաստատումից հետո, Անդրկովկասի էներգոսխառմաների միավորման համար Թբիլիզիդեպի կատարած աշխատանքը պետք է վերանայվի և ճշտվի երեք ռեսպուբլիկաների էներգոսխառմաների և «Հիդրոէներգոսխառմի» ու «Ջերմէլեկտրատնախագիծ» ինստիտուտների բաժանմունքների մասնակցությամբ:

Խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում 1959 թ. սկզբին Անդրկովկասում կաղմակերպվել համապատասխան խումբ, որը պետք է նախապատրաստական աշխատանք կատարի ՄԴԿ կազմակերպելու համար (որը կանոնադրության համաձայն ենթարկվելու է ՍՍՌՄ ԷԿՄ-ին):

Խորհրդակցությունն անհրաժեշտ գտավ խնդրել ՍՍՌՄ ԷԿՄ-ին և Գիտությունների ակադեմիային հանձնարարելու համապատասխան կաղմակերպություններին, որ 1959 թ. նրանք մշակեն ՄԴԿ-ում և առանձին էներգոսխառմաների կենտրոնական դիսպետչերական կենտրոնում ուժիմի հաշվարկման համար հաշվիչ-վճռող սարքերի կիրառելու հարցը և հանձնարարականներ տան: Նույնպես անհրաժեշտ է, որպեսզի ՍՍՌՄ ԷԿՄ-ն հանձնարարի համապատասխան կաղմակերպություններին մշակելու միացյալ Անդրկովկասյան սխառմի, որպես միասնական ամբողջության համար հաճախականության ավտոմատիկ կարգավորման և կարողությունների բաշխման սխառմաները:

Մոտակա ժամանակում անհրաժեշտ է ճշտել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի գաղափարապարարման բեռնվեր ինչպես տարեկան, այնպես էլ օրական տեսակետով, նկատի ունենալով զազի մատուցման և սպառման կարգավորման հնարավորությունները այն հաշվով, որպեսզի մշակել գաղափարաշխատող ջերմային էլեկտրակայանների աշխատանքի ճշտված գրաֆիկները և դրանց համապատասխան կարգավորող հիդրոէլեկտրակայանների աշխատանքի գրաֆիկները:

Անդրկովկասյան էներգոսխառմաների միավորման առնչությամբ խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում նախագծային մշակումներ իրագործել առանձին հեռակալային էներգետիկ սխառմաների գծով, հաշվի առնելով շինարարության արժեքի էջեցման և ուժիմային նոր պայմաններին վերաբերող վերջին աշխատանքները:

Էներգետիկ սխառմաների աշխատանքի հուսալիությունը և տնտեսական շահավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է կատարել էքսպերիմենտալ և տեսական հետազոտություններ, որոնք վերաբերում են՝

առանձին սխառմաների և ողջ միավորման ստատիկական ու դինամիկական բեռնվազերին:

միավորման ստատիկական ու դինամիկական կայունությունը, հաշվի առնելով սպառողների ազդեցությունը.

միջսխտեմային էլեկտրահաղորդման գծերի ասինխրոն կրկնակի միացման ավտոմատին.

կոմուտացիոն ապարատուրայի ուժեղացման և նրա վրա կարճ միացման հոսանքների թողած ներգործության հարցերին.

ակտիվ և ռեակտիվ կարողությունների տնտեսապես շահավետ բաշխմանը, հաշվի առնելով ցանցերում տեղի ունեցող կորուստները.

ավտոմատիկայի պարզ և հուսալի ապարատուրայի ստեղծմանը.

մինչև 3000 Վ բարձրությունների վրա բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի և ապարատուրայի մեկուսացման աշխատանքին:

Միավորման աշխատանքի օպտիմալ պայմաններ ստեղծելու համար խիստ կարևոր են հանդիսանում Անդրկովկասյան էներգոսխտեմների միավորման աշխատանքի ռեժիմների մշակումն ու վերլուծումը, մասնավորապես բաղամյա և սեզոնային կարգավորման ռեժիմները՝ հիդրոէլեկտրակայանների և ջերմային էլեկտրակայանների համար, ինչպես նաև մինչև 500 կՎ գործող գծերում և էքսպերիմենտալ տեղակայումներում պսակի հետազոտությունները: Անհրաժեշտ է, որպեսզի նշված աշխատանքները լայն մասշտաբով կատարեն նախագծային և գիտա-հետազոտական կազմակերպությունները:

Խորհրդակցությունը հանձնարարեց ընթացիկ յոթնամյակում գիտա-հետազոտական և նախագծային-հետախուզական աշխատանքներն ուղղել՝

ողջ կովկասի միավորվող տնտեսական շրջանների տարբեր էներգետիկ ռեսուրսների օգտագործման գործում բարենպաստ հարաբերակցություններ սահմանելուն.

հիդրոէլեկտրակայանների էֆեկտիվության հետազոտությանը և հիդրոէներգոշինարարության մի շարք բաղամյակումանի հիմնավորված, առանձնապես էֆեկտիվ օբյեկտների համար նախագծային դոկումենտացիայի նախապատրաստմանը.

ցանցերի էժանացման հնարավորությունների հետազոտմանը՝ մեկուսացման մակարդակների իջեցման և ենթակայանների սխեմաների պարզացման հաշվին:

Խորհրդակցությունը անհրաժեշտ համարեց խնդրել ՍՍՌՄ ԳԱ և ԷԿՄ գիտա-հետազոտական և նախագծային կազմակերպությունների աշխատանքների պլանավորման ժամանակ ապահովել առանձին աշխատանքների թեմատիկայի և կատարման ժամկետների փոխադարձ համաձայնեցումը:

Անհրաժեշտ է նույնպես վերացնել այն արատավոր պրակտիկան, երբ նախագծային աշխատանքները կատարվում են անմիջականորեն շինարարություն սկսելուց առաջ, որը թույլ չի տալիս ճիշտ կերպով հաշվի առնել զարգացման հեռանկարները, համեմատել վարիանտները, գտնել ամենից ավելի տնտեսապես շահավետ լուծումը:

Խորհրդակցությունը իբրև բացասական փաստ նշեց ՍՍՌՄ ԷԿՄ-ի հրավիրված ներկայացուցիչների բացակայությունը:

Գիտա-տեխնիկական խորհրդակցությունը, որը ընդհանուր առմամբ անցավ բարձր մակարդակով, անկասկած, էական օգնություն ցույց կտա Անդրկովկասի էներգետիկ սխտեմների միավորման նախապատրաստությանը: